



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ Մ Ա Ն

2018թ. նոյեմբերի 6-ին, N 125
ք.Աշտարակ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակի հ. 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 2-ի գրությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին» N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) «Աշտարակի հ. 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում «Հակոբյան Քրիստինե» բառերը փոխարինել «Սարգսյան Լուսինե» բառերով:

 Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 11/6/2018 09:52:11 GMT+4

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713



Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ